

39 Արդ՝ այս ինչ այսպէս ճարտար տօրամադրեալ,
 Յաջող կատարիւր ի պահ ժամադրեալ,
 Կողմնն ֆիւթիւրին յայնց յոյժ երկուցեալ,
 Գաղարիւր շրփոթ ազգիս տագնապեալ:

40 Յետ որոյ Յոհան Պատրիարդ արգոյ,
 Գառնայր ի յարկ իւր՝ փառօք եւ տիր դոհ,
 Որ գովեալ սերտիւ՝ զորդիս իւր հաճոյ,
 Ըմբէր զճնոսին, որք էին դրժգոհ:

41 Բայց կընքեալ իմ զայս կարճ միջարկութիւն,
 Գարձայց վերբստին առ իմ պատմութիւն,
 Ձե մի երկարեալ իցէ ձանձրութիւն
 Ընթերցողաց զայս պարզ երգերգութիւն:

Ե Ր Ք Հ Ի Ն Ք Ե Ր Ո Ր Ք

Որ մեկնին յայնէ Սարգսի կամաւոր
 Ի նախկին հօտէն Աեսարեան բոլոր,
 Ձունին եւ թողուն Անկուրնոյ հօտ նոր,
 Կուրբակութիւնն եւ լուն հեռաւոր:

1 Այլ արդ Սարգիս յետ մի տարւոյ
 Ի քաղաքին Բիւզանդիոյ
 Հրաժարիւր ի հովուելոյ
 Չազգ արամեան Աեսարիոյ:

2 Չոր եւ առնէր կամաւ իւրով,
 Չի զըզուեալն էր համբէրելով
 Անկրթելի անձանց անգով,
 Չորս չէր հընար հովուել շքով:

3 Քանզի նոցուն անգուլ վըրդով
 Օր ըստ օրէ մեծանալով
 Անհամ բանիւ եւ վատ գործով
 Վըթարանայր նորուն կորով: